Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԵՅԼ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 -31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունների համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը**:

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 94 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 1 դեպքի վարում /վերափաստագրում/ 31 ուղղորդում. միջամտություն/միջնորդում թաղապետարան աղքահանության արտոնություններից օգտվելու նպատակով :
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 26 հանդիպում (մասնակիցների թիվ՝  70)՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Իրականացվել են նաև մտածական գործընթացների զարգացմանն ուղղված վարժություններ, որոնց շրջանակներում քննարկվել են տարբեր թեմաներ: Իրականացվել է ինքնակարգավորման հմտությունների ձևավորման տեխնիկաներ, պրոդուկտիվ տեխնիկաներ, արտթերապևտիկ տեխնիկաներ՝ նկարչաթերապիա, մանդալաթերապիա, երաժշտաթերապիա, ուշադրության, հիշողության զարգացմանը նպաստող խաղեր, վերբալ եւ պատկերավոր մտածողությանը, ստեղծագործական երևակայության հետազոտմանը և զարգացմանն  ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև ինքնաճանաչման ուղղված պրոյեկտիվ մեթոդիկաներ:
- Այլ ծառայությունների տրամադրման շրջանակներում բուժքրոջ կողմից ցերեկային կենտրոնում իրականացվել է թվով 75 շահառուի զարկերակային    ճնշման չափում, 75 օքսիմետրիա, 5 շահառուի գլյուկոմետրիա. 2 շահառուի ներարկում, բուժքրոջ և «Կարեն Եսայանի անվան» պոլիկլինիկայի հետ համագործակցության արդյունքում 11 շահառուն ստացել են գրիպի դեմ պատվաստում: Բուժքրոջ կողմից իրականացվել է նաև հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում՝ «Հիպերտոնիա», «Սնդային թունավորումներ» «Ընչառության տեսակները», «Սնուցում», «Դեղորայքի ընդունումը և նրա ազդեցությունը», «Ատրոֆիա», «Անմիզապահություն» թեմաներով քննարկումներ:

- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում գործել են տարբեր հետաքրքրությունների խմբակներ, կազմակերպվել միջոցառումներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոններում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 9 խմբակ, որոնց մասնակցել են 94 շահառու:
    - Գրական խմբակ
    - Երգի խմբակ,
    - Կինեզիոլոգիայի խմբակ,
    - Հմուտ ձեռքեր,
    - Առողջ ապրելակերպ,
    - Աշուղական խմբակ,
    - Ազգային երգ ու պար
    - Թատերական խմբակ
    - Նկարչական խմբակ

Կազմակերպվել է թվով 47 մշակութային միջոցառում, որոնցից 20 կենտրոններում 27 կենտրոններից դուրս, որոնց մասնակցել է 94 շահառու:

Իրականացված միջոցառումներն են՝

1. «Նուննի» ցերեկային կենտրոնում կայացավ տարեցների միջազգային օրվան նվիրված «Տարիքը կյանքի պարգև է» խորագրով միջոցառում, որին մասնակցեցին նաև Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցները:
2. Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում Մատենա միջազգային դպրոցի նախաձեռնությամբ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի ցերեկային կենտրոնների ավագ սերնդի ներկայացուցիչների համար կազմակերպվել էր այցելություն Արմավիրի Արաքս համայնք, շրջայց «Ոսկենի» գինու գործարանում, գինու համտեսի արարողություն, ինչպես նաև շաշկու միջսերնդային մրցաշարին:
3. «Նուննի» ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչները հյուրընկալեցին Circofractal խմբին:
4. «Նուննի» ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչները տոնեցին «Ոսկե աշունը», որը ողողված էր աշնանային երգ ու պարով և շատ գեղեցիկ աշնանային բեմադրությամբ:
5. «Նուննի» ցերեկային կենտրոնի շահառուները գրական խմբակի խմբավարի և բուժքրոջ ուղեկցությամբ Ավետիք Իսահակյանի՝ մեծն վարպետի 150 ամյակի առիթով այցելեցին գրողի տուն-թանգարան:
6. «Նուննի» ցերեկային կենտրոնում կազմակերպվեց «Ամանորը և Սուրբ ծննդյան խորհուրդը» միջոցառում, որին մասնակցեցին ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչները, ինչպես նաև Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցները :
7. «Նուննի» ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչները հյուրընկալեցին Շիրակացու անվան դպրոցի սաներին միասին տոնելու Ամանորը:
8. Ավան համայնքային կենտրոնում կազմակերպվել է գրական գեղարվեստական միջոցառում «Աշունն ու ես» թեմայով:
9. Ավան համայնքային կենտրոնում կազմակերպվել են գրական վիկտորինաներ և տրամաբանական խաղերի մրցույթներ:
10. Ավանի Մշակույթի տանը մասնակցել են Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:
11. Նոր Նորք Ցերեկային կենտրոնում հյուրընկալել էինք «Էզե-Կիզային և ընկերներ» սոցիալական կրկեսին, որոնք իրենց հմտություններով, իմացություններով կիսվեցին բարեգործական ճաշարանի և ցերեկային կենտրոնի շահառուների հետ:

12. «Ազգային երգ ու պար» խմբակի շրջանակում հյուրընկալել էինք «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ուսուցչական երգչախմբին: Միջոցառման ժամանակ հնչեցին բազմաթիվ երգեր. պարեր, ազգային ոգին տիրեց ողջ կենտրոնում:
13. Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում,ցերեկային կենտրոնում իրականացվեց փոքրիկ միջոցառում՝ նվիրված Տարեցների միջազգային օրվան: Տոնի շրջանակում իրականացվեց հյուրասիրություն, երգ ու պարով նշվեց տոնը, մեկ անգամ էլ կարևորվեց ավագ սերնդի դերը հասարակության մեջ:
14. Նոր Նորք ցերեկային կենտրոնն հյուրընկալեց Հայաստանի Ամերիկյան Համալսարանի ուսանողներին. ովքեր ներկայացրեցին մի շարք հիվանդություններ ու նրանից բխող հետևանքները:
15. Վիկտորիա Անդրեասյանի գրական ցերեկույթ՝ ծննդյան օրվա առթիվ. որի ժամանակ հնչեցին նրա ստեղծագործությունները՝ շահառուների կողմից. մատուցվեց գեղեցիկ անակնկալ տիկին Վիկտորիային՝ գրքի տեսքով ստեղծագործությունները նվիրելով:
16. Ցերեկային կենտրոնի շահառուների հետ այց կատարվեց Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան՝ ներկա գտնվելու Ռուզաննա Բոշյանի «Քեզ» գրքի շնորհանդեսին. որի ժամանակ ելույթ ունեցավ նաև Գոհար Հարությունյանը
17. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում կազմակերպվող տոնական միջոցառմանը, որի ավարտին ավագ սերնդի ներկայացուցիչները հնարավորություն ունեցան ելույթ ունենալու, ներկայացնելու ազգային երգեր ու պարեր:
18. Տոնական միջոցառում՝ Ամանորին ընդառաջ, որին մասնակցեցին նաև համայնքում ապրող արցախցիները. միջոցառմանը ցերեկային կենտրոնի շահառուները թատերական ներկայացումով հանդես եկան. ավարտին բոլորը ստացան անակնկալ նվերներ. այցելեց նաև Ձմեռ Պապը:
19. «Անանիա Շիրակացի» ճեմարանի սաների հետ միասին նշեցինք ամանորը. ներկայացրին իրենց համերգային ծրագիրը, բոլոր շահառուները ստացան անհատական անակնկալ նվերներ:

Ցերեկային կենտրոնների շահառուների համար կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի

- Գյումրի, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Մհեր Մկրտչյանի թանգարան, Յոթ վերք եկեղեցի, Ֆոտ թայմ:
- Ապարան, Տառերի պուրակ, Դրաստամատ Կանայանի հուշարձան, Սուրբ Խաչ եկեղեցի, Ակութ հացատուն:
- Վաղարշապատ, Սուրբ Հռիփսիմե եկեղեցի, Նոյի Իջևան մշակութային այգի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Էջմիածին հացատուն:
- Արագածոտնի մարզ, Պերճ Պռոշյանի տուն-թանգարան, Ոսկեվազի գինու գործարան, Ոսկեվազի Սուրբ Հովհաննես եկեղեցի:

Մասնակցություն համերգներին

Արամ Խաչատրյան» համերգասրահում.

- Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի 17-րդ Երևանյան միջազգային փառատոնի հերթական համերգներին,
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ «Սիմֆոնիկ անտառ» համերգ նախագծին,
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Սիմֆոնիկ Եվրոպա»,
- «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոնի փակման համերգ,
- Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, ֆլեյտայի Երևանյան միջազգային փառատոնի համերգին
- Սվետլանա Նավասարդյանի մենահամերգը
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ. Գուստավ Հոլստի «Մոլորակները սիմֆոնիկ սույիթ» համերգին

- Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի. Մ. Գլինկայի անվան միջազգային մրցույթի դափնեկիրների համերգը
    - Հայաստանի պետական կամերային նվագախումբ, Նիկոլայ Մադոյանի կատարմամբ ջութակի երաժշտության լավագույն գործգործոցներ
    - Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա. Խաչատրյանի անվան 13-րդ միջազգային փառատոնի համերգները:

Կամերայի երաժշտության տուն.

- Հայաստանի պետական կամերային երգչախմբի եւ մեներգիչների համերգը
- «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի համերգները
- « Նորաստեղծ Արցախ» կամերային նվագախմբի համերգին
- Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգը նվիրված Ժան Տեր-Մերկերյանի 90 ամյակին
- Վահագն Ստամբոլցյանի անվան 2-րդ միջազգային երգեհոնային երաժշտության փառատոնի համերգներին
- Հայաստանի պետական կամերային նվագախումբ, համերգ նվիրված Զավեն Վարդանյանի 80 ամյակին
- Կոմիտասի անվան լարային քառյակի համերգին
- Հայաստանի պետական կամերային նվագախումբ, Վրացական գույներ համերգին
- Երեւանի կամերային երգչախմբի համերգին,խմբերգեր
- 17-րդ դարի Անգլիական կամերային երաժշտության համերգ

Հ. Ղափլանյանի անվան թատրոն երգ ու պարի պատանեկան խմբերի հաշվետու համերգ

- **Սննդի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը

- Էքսկուրսիա Ոսկեվազի գինու կոնյակի գործարան, Պերճ Պռոշյանի տուն թանգարան, Ոսկեվազի Սուրբ Հովհաննես եկեղեցի (տե՛ս հետեւյալ հղմամբ https://surl.li/ksnbkw ՝)
- Սեբաստացի ուսուցչական երգչախմբի հետ հանդիպում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/rkroyr )
- Ծննդյան օրվա նշում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/vtbxsi )
- AUA Turpanjian College of Health Sciences բուժքույրական ֆակուլտետում սովորող ուսանողների հետ հանդիպում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/blxvoy )
- Էքսկուրսիա Գյումրի՝ «Ասլամազյան քույրերի» պատկերասրահ. «Մհեր Մկրտչյանի» թանգարան. «Յոթ վերք» եկեղեցի: (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/udnunk ):
- «Տարիքը կյանքի պարգև է» խորագրով միջոցառում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surli.cc/fvw pp ):
- Մատենա միջազգային դպրոցի նախաձեռնությամբ իրականացված միջոցառում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/czpxto ):
- «Ոսկե աշունը» (տե՛սհետեւյալ հղմամբ՝ https://surl.li/xesdjf):
- Էքսկուրսիա դեպի Վաղարշապատ (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/ovoezv ):

- «Այց Իսահակյանի տուն-թանգարան: (տե՛ս հետեյալ հղմամբ՝ https://surl.lu/benqpj ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Համապատասխան տարածքները սպասարկող սոցիալական աշխատողները մասնակցել են Երևանի բոլոր վարչական տարածքներում ՄՍԾՏԿ-ների խորհրդատվական նիստերին եւ եռամսյակային ֆորումներին:
- ✓ Նոր Նորք համայքային կենտրոնի աշխատակիցները մասնակցել են դասընթացի
  - Թեմա՝ «Մասնագիտական այրում» դասնթացավար՝ Ալբերտ Հովհաննիսյան
- ✓ Առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացում – Ծերացում, Վերականգնում, Նորարարություն, Համակարգեր, Ներգրավվածություն թեմաներով 6 շաբաթյա առցանց դասընթաց, որին մասնակցել են Նոր Նորք Ավան համայնքային կենտրոնի սոցիալական աշխատողները եւ սուպերվիզորը
- ✓ «Նռնենի» ՀԿ հոգեբանը սեփական նախաձեռնությամբ մասնակցել է (2 ժամ) անհատական սուպերվիզիայի և հուզական այրման կանխարգելմանն ուղղված բալինտյան խմբային աշխատանքի (2 ժամ):
- ✓ «Նռնենի» համայնքային կենտրոնի աշխատակազմի. ցերեկային կենտրոնի շահառուների. ինչպես նաև Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար կազմակերպվել է երկօրյա սեմինար-պարապմունքներ՝ «Արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնները» թեմայով:
- ✓ «Նռնենի» եւ Նոր Նորք Ավան համայնքային կենտրոնների թիմ լիդերները մասնակցել են անկախ կյանքի փորձագետ Ինես Բուլիչի հետ քննարկմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ներկա իրավիճակում հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի սկզբունքներին համահունչ հնարավոր լուծումները. որոնք կհամապատասխանեն նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին:
- ✓ «Նռնենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ծառայությունների վերաբերյալ ազգային կոնֆերանսի», որը

կազմակերպվել էր «Ագաթ» ՀԿ-ի կողմից՝ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց հավասարության և մատչելիության ապահովում» ծրագրի շրջանակում:

- ✓ «Նունենի» եւ Նոր Նորք համայնքային կենտրոնների թիմ լիդերները մասնակցել են սոցիալական ծառայությունների համակարգողի կողմից կազմակերպված «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» նախարարի հրամանի նախագծի քննարկմանը:
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցում է առցանց պաշտպանվածության/ սեյֆգարդինգի հետ կապված դեպքերի քննության ընթացակարգի վերաբերյալ դասընթացներին:
- ✓ «Նունենի» եւ Նոր Նորք Ավան համայնքային կենտրոնների թիմ լիդերները մասնակցել են «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքի/ բացառությամբ խնամատար ընտանիքներում կամ հոգաբարձուի ընտանիքում իրականացվող խնամքի/ տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի շուրջ հանրային քննարկմանը:
- ✓ «Նունենի» եւ Նոր Նորք Ավան համայնքային կենտրոնների թիմ լիդերները մասնակցել են համայնքային փոքր տների, ինչպես նաև տնային խնամքի ծառայությունների չափորոշիչներին վերաբերող առցանց քննարկմանը:
- ✓ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ բոլոր կենտրոնների աշխատակիցները մասնակցել են. PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտեցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 93/94 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 64 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 69 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 30 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի  պարագայում) | 70 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենսյրոնի պարագայում) | 74 |
| 5. 1 | Նշել խմբակի անվանումը՝ Կինեզալոգիա | 57 |
| 5. 2 | Նշել խմբակի անվանումը՝ Գրական | 63 |
| 5. 3 | Նշել խմբակի անվանումը՝ Երգի | 37 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ Հմուտ ձեռքեր | 53 |
| 5.5 | Նշել խմբակի անվանումը՝ Առողջ ապրելակերպ | 54 |
| 5.6 | Նշել խմբակի անվանումը՝ Աշուղական երգի | 19 |
| 5.7 | Նշել խմբակի անվանումը՝ Ազգային երգ ու պար | 18 |
| 5.8 | Նշել խմբակի անվանումը՝ Թատերական | 15 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը՝ Նկարչական խմբակ | 20 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի  պարագայում) | 47 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 27 |
| 7. | Այլ ծառայություն Բուժքույրական ծառայություններ | 75 |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Միքայելյան___ «16» 12.2025թ

[illegible]